

2508



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 025 - 24

Ձեռնարկողը՝

«Յարթեփ Քոնսթրաքշն» ՍՊԸ
ք.Երևան, Դ. Բեկի փողոց հ.186

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջան,
Դ.Բեկի փողոց հ.186 հասցեում նախատեսվող
բնակելի համալիրի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
Նոր-Նորք վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 025 - 24

«27» 03 2024թ.

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջան, Դ.Բեկի փողոց հ.186 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Յսթեփ քոնսթրաքշն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք.Երևան, Դ.Բեկի փողոց հ.186

Ներածական մաս. «Յսթեփ քոնսթրաքշն» ՍՊԸ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի, Դ.Բեկի փողոց հ.186 հասցեում, կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N02062022-01-0382, /ծածկագիրը՝ 01-008-0629-0089/, ճարտարապետահատակագծային առաջադրանքը N01/18-07/1-Մ-16754-334, տրված՝ 02.05.2022թ.: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասն ունի հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք լայնական ուղղվածություն, կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.5179 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող «Բնակելի համալիրի» նախագիծը կազմված է երեք մասնաշենքից, որոնք միմյանցից բաժանված են սեյսմիկ կարով: Բոլոր մասնաշենքերի 18-րդ հարկում տեղակայված են փենթհաուսներ: Ընդհանուր բնակարանների քանակը 347 է, որից 9-ը փենթհաուսներ են՝ տանիքում ունեն օգտագործվող տերասաններ: Մինչև 8-րդ հարկ՝ հիմնականում տեղակայված են մանր բնակարաններ՝ հարկում 23 բնակարան: 9-րդ հարկից սկսած՝ հարկում 20 բնակարան: Նախատեսվող բնակելի համալիրն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող կառույց՝ ներդաշնակ շրջակա կառույցներին տվյալ միջավայրում: Նախատեսվող գործունեության տարածքում առկա կառույցները ապամոնտաժվել են: Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝



- Հողամասի ընդհանուր մակերես՝ 5179 մ²:
- Կառուցապատման մակերես՝ 2080 մ² – 40,16 %:
- Կանաչապատման մակերես՝ 2260 մ² – 43,64 %:
- Անջրանցիկ՝ (Մայթ, ճանապարհ, ճեմուղի և այլն)՝ 839 մ² -16.2 %:
- Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 3865 մ²:
- Բնակարանների քանակ՝ 345 հատ:
- Ավտոկայանատեղի 232 հատ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ Մաքրավանի ջրաղբյուրից, իսկ ջրահեռացումը՝ Դավիթ Բեկի փողոցով անցնող D=300մմ կոյուղատարին միանալով: Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարարական տարածքներ: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Յուրաքանչյուր բնակարանի սանհանգույցում նախատեսվում է առաստաղային օդանդիչ: Խոհանոցների արտածման համար նախատեսված օդատարերը պատրաստվում են հրակայուն սև պողպատից և մեկուսացվում են բազալտե հանքաքամբակով, առանձին առանձին մտնում են հորանի մեջ, հատուկ նախատեսված օդատարի մեջ և բարձրանում են 2,5մ: Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ: Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով: Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով: Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո: Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում: Ծխահեռացման օդանուղերը տեղակայված են տանիքի վրա: Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդանուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալկենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար: Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտը՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկները ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները: Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չչահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:



Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող: Շենքի հիմնակմախքն ամբողջովին իրականացվում է Ե/Բ-ով: Արտաքին պատերը և աստիճանավանդակների պատերն իրականացվելու են 200 մմ սնամեջ բետոնե բլոկներով՝ ներքին պատերն ու միջնորմներն իրականացվելու են գիպսեստվարաթղթե պատերով, տանիքը հարթ է: Ներկայումս տարածքում քանդման ենթակա շինություններ չկան: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով, մատակարարումը կկազմակերպվի՝ բացառելով բետոնաջրերի արտահոսքը և բետոնաջրերով աղտոտումը շրջակա միջավայր: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը: Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինհրապարակ, և տեղադրվում:
- Բետոնային խառնուրդը միաձուլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Այն տեխնիկական միջոցները, որոնք հնարավոր չէ մոտեցնել սպասարկման կետեր, կսպասարկվեն շինարարական հրապարակում՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Տարածքում քայլուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն էլեմտրամատակարարման պայմանագրի:

Բնակելի համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման էլեկտրական համակարգեր որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ՝ որոնք կապահովեն աղմուկի ցածր մակարդակ:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 57000 մ³ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 46000 մ³ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ 11000 մ³-ը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում:



կօգտագործվի որպես հետլիցք (պահվող կույտի մակերեսը կտոփանվի՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով): Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Համաձայն ինժեներակրաբանական ուսումնասիրության առաջին շերտը՝ խճային գրունտ բազալտի պարունակությամբ ավազակավային լցնումով -15-20%:

Բնակելի համալիրում տարածքում աղբահանության նպատակով կտեղադրվեն աղբահավաք տարողություններ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 600 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1600 տ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի) (ծածկագիր՝ 35131100 01 00 4) շտ, կհանձնվի մետաղաճուլական ընկերություններին:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 46000 մ³ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում: Հայտում ներկայացվել են հիմնական բնապահպանական միջոցառումները՝ ըստ ազդեցության ուղղությունների: Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են հիմքերի փորման ընթացքում և շինարարության փուլում փոշու արտանետումներով, վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx): Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- շինիրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն Կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,



- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար,
- կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Պարճառաքանական մաս.

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի տների կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ Լ-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
 - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
 - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,



